ԳՐԻԳՈՐ ԱԼԲԵՐՏԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ, ամսաթիվ, ծննդավայր

Երեսունմեկը օգոստոսի 1986 թվական, ք. Երևան:

Աշխատանքային գործունեություն

2005-2006 թվականներին աշխատել է «Լեքս-Կոմպրոմիս» ՀԿ-ում որպես հաշվապահ:

2008-2010 թվականներին աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում որպես աշխատակազմի հաշվապահ:

2010-2012 թվականներին աշխատել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում որպես տնտեսագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս (համատեղություն):

2010 թվականին աշխատել է «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում որպես դասախոս (համատեղություն):

2010-2015 թվականներին աշխատել է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտում որպես նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի պետ:

2015-2019 թվականներին աշխատել է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատում որպես աշխատակազմի 2-րդ վարչության գլխավոր մասնագետ:

2016-2019 թվականներին աշխատել է Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում որպես բնական գիտությունների ամբիոնի վարիչ և միաժամանակ դասավանդել (համատեղություն):

2019 թվականի ապրիլի 9-ին Վարչապետի N 378-Ա որոշմամբ նշանակվել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ:

2022 թվականի հուլիսի 19-ին Վարչապետի N 843-Ա որոշմամբ ազատվել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պաշտոնից:

Կրթություն

1992-2000 թվականներին սովորել է Երևանի թիվ 185 միջնակարգ դպրոցում:

2000-2002 թվականներին սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի ֆիզմաթ հոսքում:

2002-2007 թվականներին սովորել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսահաշվային ֆակուլտետում:

2007-2010 թվականներին սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ հանդիսանալով տնտեսագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ:

2018 թվականին հանդիսացել է դոկտորանտ, իրավաբանական գիտությունների՝ ԺԲ.00.02 (հանրային իրավունք) մասնագիտությամբ, դոկտորական ատենախոսության թեմա՝ Հայաստանի Հանրապետությունում բյուջետային վերահսկողության պետաիրավական կարգավորման հիմնախնդիրները:

Պետական ծառայության դասային աստիճան

2012 թվականին շնորհվել է Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

Գիտական աստիճան

Մանկավարժական գիտությունների թեկնածու:

Գիտական կոչում

Դոցենտի գիտական կոչում՝ մանկավարժություն մասնագիտությամբ:

Հասարակական գործունեություն

2018 թվականից «Հանրային ֆինանսների մոնիտորինգ» հասարակական կազմակերպության նախագահ:

Դասավանդման փորձ

Տնտեսագիտության տեսություն, հաշվապահական հաշվառում, ֆինանսական իրավունք, կառավարչական հիմունքներ:

Ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանք

Մագիստրոսական թեզերի ղեկավարում, ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահ:

Գիտական աշխատություններ, հոդվածներ

Հանդիսանում է մի շարք գիտական աշխատությունների և մենագրության հեղինակ:

Այլ տեղեկություններ

Տիրապետում է հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

էլ. փոստի հասցե՝ grigor.nersisyan@list.ru: